



92. ԽՈՍՔՆ ՕՍԿՈՒՑ ԹԱՆԿ

Ժամանակով խուռնազ թագավոր մե յըմեն հաղ կը հպարտներ,
կըսեր.

— Վերև՝ աստված, ներքև՝ ես. ո՞ն կոնա ընձի հաղթե:

Ձեն կէրթա հասնի մարդոց, թե ֆլան թագավոր հմալ բան է
ըսի, նստի-կանի՝ ուր գլուխ կը գովա: էդ վախտ շատ տեսած ու շատ
ճամպորդած հալվոր մե մըջ մտքին կըսե. «էդ թագավոր յա ախ-
մախ է, յա չգետ. կանի ես ըդոր կը ցուցում»: Կըսե, գելնա կէրթու:
հասնի էդ թագավորի քաղաք, կը կանի ինոր քոշկ ու սարի դռան
յառջև, մարդ մե կը մոտենա ուրին, կը հարցու:

— Ի՞նչ գուզիս, պապե:

— Պապեն մեռնի քըզի, գուզիմ զթագավոր տեսնամ՝ ի՞նչ
մարդ է:

— Թագավոր՝ թագավոր է, «ինչ մարդ է» մըսի՛:

— Յորի՞ն չըսիմ:

— Է՛, ո՞ն դինա ինչ գիկա մարդու գլուխ, էդի մինակ աստված
գինա:

— Օղորդ է, հմա դու զընձի տար ուր մոտ, քանիմ՝ խոսք ըսիմ,
խրատ մե տամ, դառնամ տուն:

Մարդ վռագ-վռագ կէրթա մըտ թագավոր:

— Հմա-հմա հալվոր մե՛ էկի կանի դուռ, կըսե ընձի տար
թագավորին, բան պտի ըսիմ:

— Հրամանք է՝ զհալվոր բերիք իմ յոտք:

Մարդն չառջևեն, հալվորն չետևեն կէրթան թագավորի չոտք։
Հալվոր բարև կիտա, բարև կառնեն, առանց հրամանքի կէրթա.
առոօ-փառոք կը նստի թագավորի աջ դեն, զքեֆ ու հալ կը հարցու.
Թագավոր համ կը զարմանա, համ կը հեռոտի, լե ուրին կը զսպե։

— Ի՞նչ գուզիս, հալվոր։

— Ջանի սաղութեն, հացին էփնութեն, մահին թանկութեն։
Էկիր իմ օր թե չիմնամ՝ դո՞ւ իս էն թագավոր, օր ձենձենը է՝ «Վերև՝
աստված, ներքև՝ ես, ո՞ն կոնա ընծի հաղթե»։

— Հա՛, վոլա,— կըսե,— ե՛ս իմ էն թագավոր, ի՞նչ կա։

— Ի՞նչ պտի էղնի, շատ կը խնդրվիմ՝ քոմիս զքու քոշկ ոս.
սարի մարդիկ, գուզիմ խսե մե էնիմ, թըղ անկըջի օղ էնին։

— Ի՞նչ խսա,— կը հարցու թագավոր։

— Խսե մե՛ քու պես մարդու վրեն։

Թագավոր ծափ կը զարկե, մեկ լե վազիր ու նազիր, սիլախտար.
ու սանդուխթար, քոմով գիկան, գլուխ կիտան, կիշկին օր ինոր.
աջ դեն նստիր է հալվոր մե՛ գլխու մազեր ու մուրուք սիվտակ՝ սա-
րի ձնի պես, վրեն հին շոր, չոտներնի շարուխ, մինակ աչքերն ին
պոծառ, սունչ ուրանց կը թալին փոր, էդ վախտ հալվոր ուր խսեն.
կէնե։

— Թագավոր ապրած, ժուկով-ժամանակով թուրքի սուլթան
մե կը ձենձընե ախշըրով մեկ, թե. «Վերև՝ աստված, ներքև՝ ես, ո՞ն.
կոնա ընծի հաղթե»։ Էդի լե քու պես մտածեր է, թե՛ յանի ի՞նչ
ասկար-լաշկար, ի՞նչ քաջ-կտրիճ կոնա կանի ուր դեմ, հմա պտի.
զարմանաք, օր էդ խուռնազ սուլթանին հաղթեր է կնիկ մե։

— Կնի՞կ,— կը զարմանա թագավոր,— էդի ինչ տղամարդ է
էդի, օր կնկաց հաղթվեր է։ Խա՛յ կնիկ չէղեր է, հը՞։

— Չէ, վոլա, կնիկ, իմալ կնկտիք չըմեն։

— Է՛, չետև։

— Յետև՝ թագավորին ըսիմ, էդ թուրքի խուռնազ սուլթանին.
կնիկ մե կէղնի, օր սատանեք բիլա ուրնե կը փախնեն։ Արի տես՝
օր էդ անզգամ հըտ վազիրին կը նստի կանի, սուլթանի մտքով լե.
ըսկի շընցնա, թե էնի ծուռ ճամպով կը քելե, ինչ օյին-զօյինութեն.
կէնե, կը հափլի-կոկվի, չըհեղներուն կը տանե ուր. օթախ, վեռչ կը.
կապվի հըտ սուլթանի վազիրին։ Սուլթան դուշնմիշ չէղնի, ըգրա.
խոսք գետին չը թալե, խուլասա՛ վըր գլխուն դրած ման դիկա։ Հմա
մեծօրեք ըսիր ին՝ գողուն ու ըոզուն քառսուն օր է։ Վախտ մե.
զընցնա, սուլթանի մարգոց մեկ սուլթանի անկաջ կը կաթըցու, թե.
հալ ու հեքաթ՝ կնիկգի հմլա-հմլա բաներ. կէնե։ Սուլթան քընց։

շամբի վիրու խոզ կը կատղի, ջալադ կը կանչե, օր զմարդու գլուխ
զարկե: Մարդ գընկնա յոտներ, կըսե:

— Սուլթա՛ն, իմ օր ու արև, ես քու յոտաց հողի հողն իմ, դու
յորի՛ն իմ գլուխ կիտաս զարկել. արի զէդ բան քու աչքով տես,
թե օղորդ էղամ՝ դու դինաս, քու կնիկ, թե սուտ էղամ՝ գլուխսի
զարկ:

Սուլթանն էստեղ կը կակըղնա, գուր փուք գիջու, զգլուխ կը
կախե, քիչ վեռչ կըսե մարդուն:

— Յելի կանի, քու ըսած հմալ բան է, օր շուրի մարդ աչքով
չը տեսնա, անկըջով չը լսե՝ շավտընա:

Օրերուց օր մե սուլթանն ու էդ մարդ կը տեսնան՝ հանդե վա-
զիրն, իմալ գող աղվես, էկամ ցլաց մտավ սուլթանի կնկա օթախ:
Սուլթանն ուր աչքով կը տեսնա, անկըջով կը լսե, օր կնիկն ու
վազիր քրոուփըստ կէնին, կը փաթվին յիրար, կը պագպգվին, քիչ
վեռչ շորեր ուրանց կը հանին, մտնան տեղ, կուտին դադամա
պտուղ, վրեն մեկ-մեկ սաքան լե շարբաթ կը խմին:

— Վազիր աղա, դու էդ քոպկուն ե՞ր պտի թալիս թախտից:

— Դախեն գա՛ կը թալիմ, հլա սաբը էրե, — կըսե վազիր:

— Ձը կոնա՞ս նեճիր էրթըրու վախտ թուր մե չըքըցուս մեջք՝
սատկի էրթա:

— Ձէղնի, սուլթան մինակ նեճիր շէրթա, մինակ էղնի՛ հա՛:

Կնիկ ախ կը քաշե, ուրին կը թալե վազիրի գիրկ, կը պադպըզ-
վին, պայման կը դնին, օր վաղ էլման հանպըտին: Վազիր խոսք
կիտա, էն վախտ օր գուզե դուս ցլա՝ սուլթանն գչառեջ կը կտրե,
հրամանք կիտա, օր ըդրան ու կնկան կապին ձիանու պոչերուց՝
թորկին սարեսար, քարեքար:

Վըր էդ դեպքին՝ սուլթան խեղճըցամ, միտք էրեց զախշըրի
բան, ըսեց.

— Հե՛յ գիդի հա՛յ, ես է՛ն ենք, օր կըսեր. «Վերև՝ աստված,
ներքև՝ ես, ո՞ն կոնա ընձի հաղթե»: Հմա կնիկ մե ընձի զարկեց դե-
տին, օսկի ենք, էղա գոռչ:

Հալվորն օր ուր խսեն վեռչացուց, իշկեց, տեսամ՝ թագավորն
ու ուր մարդիկ գլուխ ուրանց կախած՝ միտք կէնին: Հալվորն յելամ
յոտքի օր էրթեր, թագավորն ըսեց.

— Սուլթանի օրինակ ընձի խրատ, օր մեկ լե չըսիմ՝ «Վերև՝
աստված, ներքև՝ ես, ո՞ն կոնա ընձի հաղթե»:

— Ըպա, մարդու մեծ դուշման ուր լեզուն է: է՛, մանցեք բարի,
ես կէրթամ:

Թագավոր հրամանք կէնե, օր հալվորուն ուր քաշով մեկ օսկի տան, ձի-ձիավորով, առոք-փառոք ճամպու գնին, կը խնդրվի, օր հալվոր շուտ շուտ գա ուր մոտ, էդմալ խսեք էնե:

— Չէ,— կըսե հալվոր,— ընձի օսկի պետք չէ, օսկուց չեվելի թանկ՝ խո՛սքն է: Ո՞ն դուզե էդնի, թըղ չը հպարտնա՛, թե ուրին մարդ չը կոնա հաղթե:

էդ օրվընե, կըսին, օր էդ թագավոր էլ մեծ-մեծ չը խոսեր, լեզուն թալեր էր փոր, կը վախեներ, թե օր մե չէ օր մե՝ խուռնազ սուլթանի օղյաթն չիգեր ուր գլխուն:

